ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Տնօրեն՝ Թ.Մնարգսյան

«29» 08 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի

Ակունքի միջնակարգ դպրոց, 3-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Գասպարյան Սոնա Հունան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2022- 2023 ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) III դասարանում սովորում է 25 աշակերտ՝ 12 տղա և 13 աղջիկ: Դասարանում ստեղծվածէ կուռ, համերաշխ կոլեկտիվ:_Աշակերտների մեծ մասը հաճախել է մանկապարտեզ: Որոշ աշակերտներ աչքի են ընկնում իրենց ընդունակություններով, աշխատասեր են, ուշադիր: Կոլեկտիվը իր ներսում կարողանում է լուծել ընկերների առջև ծառացած պարզագույն խնդիրները և այլն:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
Աշակերտներին ապահովել դասագրքերով: Ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարել սերտ, համագործակցված, որպեսզի ունենանք դաստիարակված, կրթված սերունդ:_Դասարանի աշակերտների բարձր մակարդակի վրա պահելու համար պահպանել կապը ծնողների հետ, նրանց մշտապես տեղյակ պահել աշակերտների առաջադիմության ու կարգապահության մասին: Բացատրել դպրոցի դերի ու կրթության, դաստիարակության անհրաժեշտության մասին: Ապահովել ծնող-ուսուցիչ կապը: Աշխատանքները կազմակերպել այնպես, որ ծնողները լինեն աջակից դասվարին թե՛ կազմակերպչական,թե՛ ուսումնական-կրթական հարցերում: Որոնել, գտնել, կիրառել դասավանդման համար անհրաժեշտ հետաքրքիր, արդյունավետ մեթոդներ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն _Աշակերտների դաստիարակել ազգային ոգով: Հայեցի դաստիարակությունը ապահովելու նպատակով մի շարք հայ գործիչների մասին տալ այնպիսի պատկերացումներ, որոնք աշակերտներին կմղեն նմանվել հայ ազգի նվիրյալներին: Բացատրել կրոնական տոների իմաստը:

Գեղագիտական դաստիարակություն _Աշակերտների մոտ ձևավորել գեղեցիկի՝ որպես ներդաշնակության մասին պատկերացումը: Ուղղորդել դեպի այն, որ գեղեցիկը ունի ոչ միայն արտաքին, այլև ներքին կողմ և ներդաշնակությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ գեղեցիկի արտահայտման ներքին և արտաքին կողմերը գտնվում են միասնության մեջ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն__Դաստիարակել քաջություն և արիություն ոչ միայն մարմնում, այլև հոգում: Ձևավորել պայքարի ոգին ՝ հայրենիքի միասնականության, անվտանգության ու խաղաղության համար՝ դրա հենքում դնելով համերաշխության սկզբունքը:

Ֆիզիկական դաստիարակություն __Աշակերտներին մասնակից դարձնել սպորտային միջոցառումներին, մրցումներին: Խրախուսել մարզաձևերում աչքի ընկնող աշակերտներին: Խոսել անձնական հիգիենայի մասին:

Աշխատանքային դաստիարակություն __Հետևել դասարանի մաքրությանը, խնամել ծաղիկները: Հարգել ուրիշի աշխատանքը: Ձևավորել աշխատանքային հմտություններ: Աշակերտներին մասնակից դարձնել մանկական ցուցահանդեսներին:

Բնապահպանական դաստիարակություն __Դաստիարակել ուշադիր վերաբերմունք շրջապատող բնության , դպրոցի, սեփական քաղաքի նկատմամբ: Վաղ մանկությունից երեխան նույնպես պարտավոր է պատասխանատվություն կրել շրջակա միջավայրի պահպանման համար:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ___Ապահովել ծնող-դպրոց կապը: Ծնողական ակտիվ կոլեկտիվին ներգրավել դպրոցական միջոցառումներին: Զրույցներ անցկացնել երեխայի օրվա ռեժիմի կազմակերպման մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

N	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Աշակերտներին ապահովել դասագրքերով: Հետևել սանիտարական վիճակին, կարգապահությանը:	I	գրադարանավար դասվար
2	Ընտրել դասարանի ավագ, անդամներ: Հետևել կարգապահությանը:	II	դասվար
3	Ֆիլմի դիտում<<Գրքերի ծնունդը>> վերնագրով:	III	Դասվար, աշակերտներ
4	Զրույց<<Մեր հանճարեղ և հրաշագործ Վ. Համբարձումյանը>> թեմայով:Հետաքրքիր պատմություններ Վ. Համբարձումյանի մասին:	IV	Դասվար, աշակերտներ
5	Անցկացնել ներդասարանական միջոցառում՝ <<Սիրենք մեր հայրենիքը>>:	V	Դասվար, աշակերտներ
6	Կազմակերպել մրցույթ-վիկտորինա <<Լավագույն գիրքը...>> թեմայով:	VI	Դասվար, աշակերտներ
7	Աշխատանք տանել երեխաների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ	VII	Դասվար, աշակերտներ
8	Զրույց՝ <<Լեզուն ու հավատը որպես ազգապահպան գործոն>> թեմայով:	VIII	Դասվար, աշակերտներ
9	Զրույց՝ <<Ոսկե աշուն>> թեմայով: Կատարել աշխատանքներ տերևներով:Խոսել աշնան բարիքների մասին:	IX	Դասվար, աշակերտներ
10	Անցկացնել զրույց՝ <<Ինչով հպարտանալ մեր օրերում>>թեմայով:	X	Դասվար, աշակերտներ
11	Զրույց՝ <<Ճիշտ կազմակերպիր օրդ >> թեմայով:	XI	Դասվար, աշակերտներ
12	Կրկնել երթևեկության կանոնները,պահպանել բոլոր օրենքները: Լինել ՀՀ օրինապահ քաղաքացի:	XII	Դասվար, աշակերտներ
13	Կազմակերպել երկխոսություն՝<<Ինչպես ապահովել անվտանգությունը արտակարգ իրավիճակներում>> թեմայով:	XIII	Դասվար, աշակերտներ
14	Զրույց՝ <<Ով աշխատի, նա կուտի >> թեմայով:	XIV	Դասվար, աշակերտներ
15	Զրույց՝<<Տարերային աղետները Հայաստանում>>:Ինչպես պաշտպանվել հանրային	XV	Դասվար,

	աղետներից:		աշակերտներ
17	<< Պոլիէթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>>	XVI	Դասվար, աշակերտներ
18	Կազմակերպել ներդասարանական միջոցառում՝ նվիրված Հայոց բանակին:	XVII	Դասվար, աշակերտներ
19	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:	XVIII	Դասվար, աշակերտներ
20	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	XIX	Դասվար, աշակերտներ
21	< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները: Ամանոր , նրա կարևորությունն ու նշման առանձնահատկությունները:	XX	Դասվար, աշակերտներ
22	Աշակերտների միջանձնային փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում:	XXI	Դասվար, աշակերտներ
23	Կազմակերպել ներդասարանական փոքրիկ միջոցառում՝ նվիրված մայրիկների տոնին:	XXII	Դասվար, աշակերտներ
24	<< Պետք է արդյոք խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը՝ ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք:	XXIII	Դասվար, աշակերտներ
25	Զրույց՝ <<Իմ իրավունքները և պարտականությունները դպրոցում>>	XXIV	Դասվար, աշակերտներ
26	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույց:	XXV	Դասվար, աշակերտներ
27	< Հայոց Մեծ եղեռն >> : Աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	XXVI	Դասվար, աշակերտներ
28	Հետևել դժվար դաստիարակվող երեխաների վարքին,անցկացնել զրույց՝<<Ինչպես խուսափել վատ արարքներից>>թեմայով	XXVII	Դասվար, աշակերտներ
29	Անցկացնել մրցույթ՝<<Առած-ասացվածքներ…>> թեմայով:	XXVIII	Դասվար, աշակերտներ
30	Զրույց՝ <<Վարքը հասարակական վայրերում>> թեմայով:	XXIX	Դասվար, աշակերտներ
31	Հետևել դասագրքերի խնամքին: Ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում և վերլուծում:	XXX	Դասվար, աշակերտներ

32	Անցկացնել զրույց՝ **<<**Եղիր մաքուր և կոկիկ **>>**թեմայով**:**	XXXI	Դասվար, աշակերտներ
33	**<<**Եթե ես լինեի **...>>** թեմայով քննարկում**:** Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները**:**	XXXII	Դասվար, աշակերտներ
34	Անցկացնել զրույց՝ **<<**Ինչպես վարվել կենցաղային վտանգավոր իրադրություններում**>>**թեմայով	XXXIII	Դասվար, աշակերտներ
35	Զրույց՝ **<<** Ամենալավ դպրոցը**>>** թեմայով**:** Անցկացնել նկարների մրցույթ**:**	XXXIV	Դասվար, աշակերտներ